

**Չարդ** Ե՞րբ է Չանձնաժողովը մերժում հայտը:

**Պատասխան** Չանձնաժողովը հայտը մերժում է, եթե՝

1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները չեն համապատասխանում օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջներին,

2) լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ լիցենզավորված անձին տրված իրավունքը,

3) լիցենզավորվող գործունեության իրականացումը կհանգեցնի էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման կամ Արցախի Չանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման կամ չի համապատասխանի Արցախի Չանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարային ծրագրերին,

4) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով, կամ գտնվում է սնանկության կամ լուծարման գործընթացում: